

ՄԵԼԻՔ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ

ԵՊԲՀ իրավագիտական բաժնի պետ,
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի, քրեական և քրեական դատավարության իրավունքի
ամբիոնի հայցորդ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ (Կրճատումներով)

Հայ իրավունքը և իրավագիտության պատմությունը իր տարբեր դրսևորումներով և յուրահատկություններով հանդերձ ուշադրության արժանի է և գնահատելի: Այնուհանդերձ, Հայաստանում ժամանակի հրամայական պահանջ է իրավական նոր զարգացումների, այն է՝ պետության և նրա կառուցակարգերի համար ազգային իրավական համակարգի ստեղծումը և կայացումը: Այս առումով անհրաժեշտություն է հետազոտել և ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության իրավական բարեփոխումների գործընթացը՝ գնահատելու համար նրա նշանակությունը պետության զարգացման և իրավական կառուցակարգերի կայացման գործում: Պետական իրավական զարգացումների գործընթացի ուսումնասիրությունը թույլ կտա հետագա իրավական բարեփոխումների համար ստեղծել հետազոտված և համակարգված հիմք:

Իրավական բարեփոխումների իրականացման հիմնական նպատակը պետության զարգացմանը նպաստելն է, որը պետք է իրականացվի հասարակական հարաբերությունների զարգացմանը համընթաց՝ հաշվի առնելով **հասարակական պահանջը**, վերջնական նպատակ ունենալով ստեղծել անվտանգ և բարեկեցիկ երկիր: Միայն կայացած իրավական պետության առկայության պայմաններում է հնարավոր անվտանգ և բարեկեցիկ հասարակության գոյատևումը այդ պետության տարածքում:

Ցանկացած պետության մեջ իրականացվում են բարեփոխումներ, յուրաքանչյուր պետության մեջ տարբեր դրսևորումներով: Բնականաբար, բռնատիրական համակարգ ունեցող պետություններում բարեփոխումների գործընթացը որպես կանոն նպատակ չի հետապնդում դեմոկրատացնելու կառավարման համակարգը, այլ ընդամենը իրականացվում են այնպիսի փոփոխություններ, որոնք ավելի կամրապնդեն իշխանությունների

դիրքերը կամ նպաստավոր պայմաններ կստեղծեն այդ համակարգը սպասարկող ձեռնարկատիրական գործունեության համար: Աշխարհայինը տուրք տալու համար պետք է ասենք, որ ժամանակին խորհրդային միության մեջ իրականացվել են այնպիսի բարեփոխումներ, որի հետևանքով ավելի են պաշտպանվել մարդկանց սոցիալական իրավունքները: Սակայն դրանք բացառություններ են և որպես կանոն «բարեփոխումները» բնորոշ են զարգացող և զարգացած պետություններին: Չարգացող պետություններում բարեփոխումների գործընթացներն իրականացվում են առավել ինտենսիվ և արմատական՝ հաշվի առնելով այդ պետություններում՝ արագ և համակարգային փոփոխությունների անհրաժեշտությունը, իսկ որոշ պետություններում նաև անցումային շրջանը (օրինակ՝ նախկին խորհրդային հանրապետությունները կամ սոցիալիստական ճամբարի պետությունները): Այլ է իրավիճակը զարգացած երկրներում, որտեղ բարեփոխումները ուղղվում են հիմնականում առկա համակարգերի կատարելագործմանը: Որոշ եվրոպական երկրներում նույնիսկ կան ամրագրված կանոններ, որտեղ պարտադրվում է օրենսդրին կամ տվյալ օրենսդրության պատասխանատու իրավակիրառող պետական կառավարման մարմին ժամանակ առ ժամանակ նախաձեռնել օրենսդրական բարեփոխումներ՝ հաշվի առնելով հասարակական պահանջը և կիրառման արդյունքում առաջացած թերությունները:

Խոսելով Հայաստանում իրականացվող բարեփոխումների մասին՝ պետք է փաստենք, որ ներկայումս երկիրը լուրջ բարեփոխումների կարիք ունի և հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետությունը շարժվում է ժողովրդավարական ճանապարհով՝ բարեփոխումների գործընթացն անհրաժեշտ է իրականացնել արմատական՝ հասարակական, տնտեսական գործընթացների զարգացմանը

համընթաց և առավել ինտենսիվ՝ կարևորելով դրանց անհրաժեշտությունը երկրի զարգացման գործում: Բնականաբար այդ գործընթացում օժանդակող և կարգավորիչ դեր ունի իրավական բարեփոխումների գիտական հիմնավորված և հասարակական, քաղաքական, տնտեսական զարգացումները հաշվառած ուսումնասիրություններն ու հետազոտությունները: Հայ իրավագիտությունը այս առումով դեռևս անցնելու ճանապարհ ունի՝ հաշվի առնելով պետական շինարարության անցումային ժամանակաշրջանը, ինչպես նաև ժամանակակից մարտահրավերները: Ինչևիցե, առավել սեղմ իրավական բարեփոխումները կարելի է բնորոշել հետևյալ կերպ.

- Իրավական բարեփոխումներն անընդհատ իրականացվող գործընթաց է, որի նպատակը հասարակական, տնտեսական, քաղաքական գործընթացների զարգացումներին համընթաց իրավական անհրաժեշտ ռեժիմի սահմանումն է:

Բարեփոխումների գործընթացը պետք է նպաստի պետության կառավարմանը ժողովրդի մասնակցության արդյունավետության բարձրացմանը, հասարակական, տնտեսական և այլ ոլորտներում պարբերաբար առաջացող խնդիրների վերահանմանը և լուծմանը: Բարեփոխումները պետք է լինեն հիմնավորված և ժամանակին: Իրավական բարեփոխումները, ինչպես արդեն նշվեց, պետք է հիմք հանդիսանա պետության և պետական համակարգերի, ինչպես նաև սահմանադրական բարեփոխումների իրականացմանը:

Իրավական բարեփոխումների գործընթացում սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հիմնականում պետական համակարգի կանոնակարգման և մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ սահմանումներ տալու կարևորությամբ: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, հայ իրավական միտքը գիտակցել է պետության գլխավոր կանոնակարգի անհրաժեշտությունը: Անառարկելի է, որ 1773 թվականին Շահամիր Շահամիրյանի կողմից մշակված «Ռոդգայթ փառաց» աշխատությունը հայազիտական գնահատելի իրավական հուշարձաններից է, որտեղ մասնավորապես սահմանվում է անձի ազատությունների և իրավունքների գերակայության մասին դրույթներ՝ անկախ նրանց դրությունից, ինչպես նաև կառավարման վերաբերյալ կանոնների ժողովրդավարացմանը ուղղված դրույթներ: Պետական շինարարության, պետական նոր մտածողության ներդրման և արդար ու

իրավական պետականության հաստատման առումով գտնում ենք, որ «Ռոդգայթ փառաց» աշխատությունը հայկական սահմանադրական զարգացումների ուսանելի արժեք կարող է հանդիսանալ²:

Պետությունների համաշխարհային զարգացումների ընթացքը ցույց է տալիս, որ սահմանադրության ընդունման փաստը գրեթե բոլոր պետություններում անցած և հաստատված գործընթաց է: Որպես կանոն սահմանադրությունները ընդունվում են ազգերի ինքնորոշման, անկախության, պետականության ստեղծման, ինչպես նաև ազգային ազատագրական պայքարի, հեղափոխությունների, հեղաշրջումների, միապետության տապալման արդյունքում: Ինչպես հայտնի է, Հայաստանի առաջին հանրապետությունը իր գործունեության կարճ ժամանակահատվածի պատճառով լուրջ օրենսդրություն չձևավորեց, այդ թվում՝ հիմնական օրենք: Սակայն երկրող հանրապետությունում գործում էր սահմանադրություն, որն ընդունվել էր կոմունիստական հեղափոխության արդյունքում: Երրորդ հանրապետության սահմանադրությունը՝ անկախության հռչակման արդյունք էր:

Սահմանադրության ընդունումը մեծ մասամբ կամ որպես կանոն զուգորդվում է անցումային գործընթացներով: Շատ երկրներում սահմանադրության ընդունումը դառնում է քաղաքացիական պատերազմը կանխելու, տարածքային ամբողջականությունը պահպանելու, ինչպես նաև պետական իշխանությունը ձևավորելու միջոց: Սակայն իր ժամանակի առումով ճիշտ և արդարացված սահմանադրությունը իր կառուցվածքով և հիմնադրույթներով տարիների, տասնամյակների ընթացքում կարող է վերածվել իրավաբանական մի փաստաթղթի, որը կարող է չարտացոլել տվյալ ժամանակաշրջանի պահանջները: Խոսքը հավասարապես վերաբերում է և՛ մարդու հիմնական իրավունքներին ու ազատություններին, և՛ պետական իշխանության կազմակերպմանն ու իրականացմանը: Պետական, հասարակական, տնտեսական հարաբերությունները զարգանում են՝ իրենց հետքերելով նոր իրավահարաբերությունների անհրաժեշտություն, ինչպես նաև պետության կառուցվածքի և կառավարման ձևերի կատարելագործման անհրաժեշտություն: Այս տեսանկյունից սահմանադրությունը կարգավորիչ դեր ունի, ինչպես զարգացող հարաբերությունների կանոնակարգման, այնպես էլ՝ սահմանադրությամբ այնպիսի ճկուն մեխանիզմների ներդրման տեսանկյունից, որոնք այլ օրենսդրությանը զարգացման և անընդհատ

կատարելագործման հնարավորություն կտան:

Հարկ է նշել նաև, որ սահմանադրական նորմերը քարացած չեն և ժամանակ առ ժամանակ դրանք որոշակի զարգացումների գործընթաց են ապրում, այսինքն՝ կամ փոփոխությունների են ենթարկվում, կամ էլ ուղղակի փոխարինվում են նոր սահմանադրությամբ: Սահմանադրությունը, որպես կանոն, ստեղծվում է երկարատև ժամանակի համար և սահմանադրական հաճախակի փոփոխությունները արդարացված չեն: Խոսքը գնում է միայն բացառիկ դեպքերի մասին, երբ սահմանադրական փոփոխություններն անհրաժեշտություն են ու անխուսափելի և հասարակական հարաբերությունների շարժուն ընթացքը նոր իրավահարաբերությունների սահմանման անհրաժեշտություն է առաջացնում:

Խորհրդային Միության օրոք կոմունիստական կուսակցության ղեկավար դեր ունենալու հանգամանքը թույլ չտվեց լիարժեք կյանքի կոչել ինչպես ամբողջ Խորհրդային միության, այնպես էլ Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության հիմնական օրենքը՝ սահմանադրությունը: Երկիրը առաջնորդվում էր կոմունիստական գաղափարախոսության շրջանակներում արձակվող կանոններով: ՀԽՍՀ սահմանադրության իրավակիրառման բացակայության պայմաններում իրավագիտությունը հնարավորություն չունեցավ իրավական գնահատական տալու ինչպես սահմանադրության դրույթներին, այնպես էլ նրանով սահմանված խորհրդային կառավարման համակարգին: Չնայած՝ կոմունիստական վարչակազմի անկումից հետո՝ Հայաստանի երրորդ հանրապետության առաջին տարիներին խորհրդային սահմանադրությունը սկսեց գործել ու իրավակիրառվել և պետք է անկեղծորեն ասել, որ այն իրականում պարունակում էր մարդու իրավունքներին առնչվող արդարացի սահմանումներ և կառավարման հետաքրքրաշարժ համակարգ: Սակայն ՀԽՍՀ սահմանադրությունը ազգային չէր և այդ պատճառով այն լիովին փոխարինվեց նոր սահմանադրությամբ: Նոր սահմանադրությամբ Հայաստանի երրորդ հանրապետությունում իրականացվեցին արմատական իրավական բարեփոխումներ: Հանրաքվեի միջոցով ընդունվեց սահմանադրություն և 1995 թվականի հուլիսի 5-ից Հայաստանում գործում է նոր սահմանադրություն: Այն անցումային ժամանակաշրջանի ծնունդ էր և, գուցե, իր ժամանակի համար արդարացված: Սահմանադրության գործողությամբ հանրապետությունը դառնում է կի-

սանախագահական կառավարման համակարգով պետություն: Հետագոտելով 1995 թվականին ընդունված Սահմանադրությունը և նրանով ամրագրված կիսանախագահական կամ խառը կառավարման համակարգը, ինչպես նաև գնահատելով նրա իրավակիրառումը՝ արդարացիորեն պետք է ասենք, որ խառը կառավարման համակարգի նժարը Հայաստանում ավելի շուտ միտված էր դեպի նախագահական ինստիտուտը: Սակայն պետք է ընդունել, որ Հայաստանի երրորդ հանրապետության անցումային շրջանում հանրապետության օպերատիվ կառավարման անհրաժեշտության առումով լուրջ դերակատություն ունեցավ Նախագահի ինստիտուտը: Բնականաբար վերն ասվածով ամենևին էլ չենք ուզում արդարացնել այդ ժամանակվա Նախագահի ինստիտուտի գերիխառություններով օժտելու փաստը և իշխանության այլ թևերի դերի բացակայությունը կառավարման համակարգում:

Արդեն խոսել ենք այն մասին, որ Հայաստանը 1990 թվականին թևակոխեց նոր ժամանակաշրջան: Հայաստանում, այդ թվում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրականացվեցին Հայաստանի Խորհրդարանի (Գերագույն խորհրդի) պատգամավորների ընտրություններ, որով և ազատական գաղափարախոսական նոր համակարգի հիմքը դրվեց: Կոմունիստական գաղափարախոսությունը Սովետական Միության ժամանակ, ըստ էության, վերածվել էր երկրի «Կառավարիչ կազմակերպության»: Կոմունիստական կուսակցության կենտրոնական վարչակազմում էր որոշվում Հանրապետության կառավարման ուղղությունները, և կուսակցության տարածքային մարմինները ռեալիզացնում, ղեկավարում էին դրանց իրականացումը: Խորհրդային Միության կոմունիստական վարչակազմի ղեկավարության ներքո Խորհրդային Միության հանրապետությունների կոմունիստական վարչախմբերը փաստացի կառավարում էին տվյալ հանրապետությունները՝ ունենալով իրական իշխանություն և՛ գործադիր, և՛ օրենսդիր, և՛ դատական իշխանության նկատմամբ: Եթե խոսենք առավել ճշգրիտ, հանրապետության փաստացի ղեկավարը հանդիսանում էր կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարը և նրան օժանդակող կոմունիստական վարչակազմի այլ քարտուղարներ:

Կոմունիստական կուսակցության ապաիշխանացումից հետո իշխանությունը իրենց վրա վերցրին հանրապետության սահմանադրությամբ

նախատեսված մարմինները, այն է՝ խորհուրդները Գերագույն խորհրդի գլխավորությամբ: Փաստորեն, հանրապետությունը միակենտրոն կառավարման համակարգից կտրուկ անցում կատարեց կոլեգիալ կամ պառլամենտական կառավարման համակարգի: Գործող համակարգի կտրուկ փոփոխությունը վակուում առաջացրեց կառավարման համակարգում: Եվ պատահական չէր, որ 1990-1991 թվականների երկրի Գերագույն խորհրդի նախագահը պարբերաբար հանդես էր գալիս իրեն լրացուցիչ լիազորություններով օժտելու առաջարկությամբ: Վերջինս էլ ակտիվ մասնակցություն ունեցավ երկրում Նախագահի ինստիտուտի ներդրման հարցում: Նախագահի ինստիտուտի ներդրման գաղափարը, թերևս, տվյալ ժամանակաշրջանում ամենաարդարացված մոտեցումներից ենք համարում: Նոր անկախացող երկրում, որտեղ նոր էր սկսել ձևավորվել բազմակուսակցական քաղաքական համակարգը, որտեղ նոր էր սկսել ձևավորվել ազատ տնտեսավարման մեխանիզմները և իրականացվում էր պետական սեփականության ձևերից մասնավոր կամ խմբակային սեփականության ձևերի անցում, առավել քան կարևորվում էր օպերատիվ կառավարման մեխանիզմների ներդրումը: Չարգացող հարաբերությունների, այդ թվում՝ տնտեսական, հասարակական իրավական բարեփոխումների գործընթացի արագ կամ օպերատիվ կառավարման գործիքի ներդրման անհրաժեշտություն էր առաջացել: Օպերատիվ կառավարումը առավել քան կարևորվում էր հանրապետության արտաքին սպառնալիքի, այն է՝ պատերազմի վտանգի պայմաններում:

Հետագոտելով միակենտրոն (նախագահական կամ կիսանախագահական) կառավարման համակարգերը և նրա ինստիտուցիոնալ զարգացումները աշխարհում՝ գալիս ենք այն եզրահանգման, որ այն բավականին կատարելագործվել է և՛ լիազորությունների, և՛ իշխանության կազմակերպման առումով: Այդ ինստիտուտներն ունեն բավականին առանձնահատկություններ, որոնց անդրադառնալը այժմ մեր խնդիրը չէ: Սակայն, երբ խոսքը գնում է կառավարման համակարգերին, առավել քան կարևոր է օրենսդրորեն կամ երկրի հիմնական օրենքով հնարավորինս մանրամասն և սպառիչ սահմանել և՛ Նախագահի և՛ պառլամենտի լիազորությունները, նշված երկու ինստիտուտների իրավասությունների սահմանազատումը իրավակիրառման ընթացքում ապահովելու համար:

Հայաստանում Նախագահի ինստիտուտը

ներդրվել է 1991 թվականին: Տվյալ ժամանակաշրջանում երկրի սահմանադրությունը, որը ժառանգվել էր Խորհրդային Հայաստանից, նախագահի ինստիտուտ չէր նախատեսում: Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունեց «ՀՀ Նախագահի մասին» և «ՀՀ Նախագահի ընտրությունների մասին» օրենքներ, որով և հիմք դրվեց Հայաստանում նախագահի ինստիտուտին՝ կիսանախագահական կամ խառը կառավարման ձևով: Հետագա պետական իրավական զարգացումները հանգեցրին Նախագահի ինստիտուտի ամրապնդմանը և վերջապես 1995 թվականից հանրապետությունում գործող Սահմանադրությամբ պետական կառավարման համակարգի հստակեցմանը: Ինչ վերաբերում է Հայաստանի Նախագահի ինստիտուտին սահմանադրական բարեփոխումներից հետո, պետք է ընդգծել, որ այն ընդհանուր առմամբ համահունչ է միջազգային փորձին և խառը կառավարման համակարգերի առանձնահատկություններին: Սահմանադրությունը մշակելիս հաշվի է առնվել նաև միջազգային սահմանադրագիտությունը և մեր ազգային յուրահատկությունները: Իհարկե, վերջինիս պարագայում ավելի քան աղքատիկ էլեմենտներ են ներդրվել: Հուսով ենք՝ հետագա սահմանադրական զարգացումները իրենց մեջ կներառեն նաև մեր ազգային խառնվածքին և աշխարհագրական դիրքին բնորոշ սահմանումներ կամ, առավել ճիշտ կլինի ասել, հայկական մոտեցումներ:

Իհարկե, հավակնություն չունեն ասելու, որ 1995 թվականին ընդունված սահմանադրությունը կատարյալ էր և ամբողջությամբ է արտացոլել իշխանության մարմինների տարանջատումը և հավասարակշռումը, ինչպես նաև Նախագահի դերը կառավարման համակարգերում: Միայն եմ համարում գնահատականներ տալ Սահմանադրությանը այն ժամանակ, երբ նրա ոչ բոլոր դրույթներն են կիրառվում կամ կիրառվում են թերի: Այսինքն՝ մեր Սահմանադրությունը լիարժեք փորձության դեռևս չի ենթարկվել:

Հայաստանի Սահմանադրության ընդունումից տասը տարի հետո իրականացվեցին սահմանադրական բարեփոխումներ: Այս դեպքում փոփոխություններն իրականում դրական էին: Ինչպես արդեն վերը խոսվեց, 1995 թվականին Սահմանադրությունը ընդունվեց այնպիսի ժամանակահատվածում, երբ Հայաստանը գտնվում էր անցումային սկզբնական շրջանում, տնտեսության խորը անկման և դեռևս պատերազմական սպառնալիքի

պայմաններում: Բնականաբար տասը տարիների ընթացքում հանրապետությունում բավականին տեղաշարժեր կատարվեցին, տնտեսությունը որոշակի առաջընթաց ունեցավ, և հասարակական այլ ոլորտներում նույնպես կատարվեցին որոշակի զարգացումներ: Բացի դրանից՝ այդ ընթացքում Հայաստանը անդամակցեց բազմաթիվ միջազգային կառույցների, այդ թվում՝ Եվրոխորհրդին և ստանձնեց բազմաթիվ պարտավորություններ: Կարելի է թվարկել մաս ալ գործոններ, որոնց արդյունքում հանրապետությունում սկսվեց սահմանադրությունը բարեփոխելու գործընթաց: Այսինքն, արդեն առաջացել էր սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն: Եվ ոչ միայն հիմա, այլև տարիների, տասնամյակների ընթացքում պետական, հասարակական, տնտեսական հարաբերությունների զարգացմանը համընթաց՝ Հայաստանի Սահմանադրության մեջ կկատարվեն փոփոխություններ: Սկզբնական՝ անցումային շրջանում սահմանադրական փոփոխությունները կլինեն ավելի հաճախ, իսկ հետագայում՝ պետական իշխանության մարմինների և հասարակական, քաղաքական ինստիտուտների զարգացման ու կայունացման հետ միասին առավել բացառիկ բնույթ կստանան:

Ինչպիսի սահմանադրություն, սահմանադրական փոփոխություններ և ընդհանրապես ազգային կառուցվածքներ են անհրաժեշտ Հայաստանին, հաշվի առնելով մեր ազգային նկարագիրը: Միանշանակ ասել, թե որ տարբերակն է առավել ճիշտը կամ արդյունավետը Հայաստանի համար, դժվար է: Եվ՝ նախագահական, և՛ կիսանախագահական, և՛ պառլամենտական և նույնիսկ միապետական կառավարման ձևերը կարող են լինել ժողովրդավարական, ազատ, իրավական, եթե գործում են սահմանադրությունը, օրենքները, պաշտպանվում են մարդու իրավունքները և ազատությունները, գործում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, ինչպես նաև սահմանված իրավանորմերը դեկլարատիվ բնույթ չեն կրում: Ընդ որում, մարդու իրավունքների պաշտպանության առաքելությունը պետք է տարածվի անխտիր բոլոր իշխանական մարմիններում, այլ ոչ թե վերաբերվի միայն առանձին իրավապահ մարմինների (մարդու իրավունքների պաշտպան, ոստիկանություն, դատարան և այլն)³:

Խորհրդային Հայաստանի Սահմանադրությունը, չնայած նրան, որ ազգային չէր, ուներ խորհրդարանական կառավարման յուրօրինակ ձև:

Եվ չի կարելի համաձայնվել այն մտքի հետ, որ այդ Սահմանադրությունը լավը չէր և կառավարման սահմանված համակարգը արդյունավետ լինել չէր կարող, քանի որ իրականում այդ սահմանադրության դրույթները չեն գործել և պրակտիկորեն չեն կիրառվել: Այսինքն՝ գնահատման առարկա գոյություն չունի: Այսօրվա գործող սահմանադրությանը նույնպես կտրուկ գնահատականներ տալը ընդունելի չէ, և այն կարծիքները, թե Հայաստանի կառավարման համակարգում անկատարությունը սահմանադրության դրույթներից է կամ կառավարման ձևի ընտրությունից, կարծում ենք տեղին չէ: Գտնում ենք, որ դա սահմանադրական դրույթների ոչ լիարժեք գործելու հանգամանքից է կախված: Պատմության մեջ կան այնպիսի օրինակներ, երբ սահմանադրության մեջ ամրագրված են մարդու իրավունքների և պետական իշխանության իրականացման մարդասիրական և ժողովրդավարական սկզբունքներ, որոնք իրականում չեն գործել: Շատ երկրներում նույնիսկ սահմանադրական կարգը բռնափոխվել է, և հաստատվել բռնապետություն: Այս առումով անհրաժեշտ է հարցի ծանրությունը տանել ոչ միայն կառավարման ձևերի կտրուկ փոփոխությունների, այլ սահմանադրության գործողության երաշխիքների ապահովման ուղղությամբ, որի կրողը պետք է լինի ժողովուրդը՝ ունենալով պետության կառավարմանը մասնակցելու առավել հստակ մեխանիզմներ և իրավունքներ:

Այսպիսով, սահմանադրական զարգացումների գործընթացում առաջին հերթին պետք է փաստել սահմանադրության ընդունման կարևորությունը, որի նպատակն է.

- հիմնական իրավանորմերը համակարգել մեկ միասնական կանոնակարգի մեջ,
- սահմանել մարդու գերակա և բնական իրավունքների առաջնայնությունը,
- սահմանել հասարակական կեցության կանոնները,
- կառավարման համակարգերի կանոնակարգումը, այդ թվում իշխանության մարմինների անկախության չափերի սահմանումը, որը կհանգեցնի իշխանության ճյուղերի փոխադարձ հակակշիռների համակարգի և հավասարակշիռ գործունեությունը կբացառի իշխանության միանձնյա զավթումը իշխանության որևէ այլ ճյուղի կողմից,
- արդարադատության հիմնական կանոնների սահմանումը, այդ թվում դատական մարմինների անկախ կարգավիճակի հաստատման միջոցով:

Երկրորդ՝ նույնպես կարևոր հանգամանքը այն է, որ անհրաժեշտ է (վերը խոսված պատճառներից ելնելով) ժամանակ առ ժամանակ իրականացնել սահմանադրական փոփոխություններ: Սահմանադրությունների ընդունման կամ դրանցում փոփոխություններ կատարելու հիմնական խնդիրը պետք է լինի իրավունքի գերակայության երաշխավորումը: Այն դեպքերում, երբ սահմանադրության բարեփոխումների անվան տակ որոշակի քաղաքական խնդիրներ են լուծվում, առանց հաշվառելու իրավունքի գերակայության երաշխավորման սկզբունքը, դրանք չեն կարող լինել բարեփոխումներ, ավելին՝ կհակասեն իրավական ու ժողովրդավարության արժեքներին և սկզբունքներին: Անթույլատրելի է սահմանադրական ցանկացած փոփոխություն, որը կբուլացնի իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու իրավունքների պաշտպանությունը կամ այդ իրավունքների ու ազատությունների իրացման երաշխիքները:

Ինչ վերաբերում է Հայաստանի սահմա-

նադրական հետագա փոփոխություններին, գտնում ենք՝ դրանք պետք է առաջին հերթին իրականացվեն հասարակական պահանջի հաշվառմամբ, ինչպես նաև գիտական հիմնավորված հետազոտական աշխատանքների հիման վրա: Հետագայում փորձելու ենք հիմնավորել Հայաստանի համար նախընտրելի կառավարման համակարգի և դրա հետ կապված սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը: Գտնում ենք, որ այն պետք է լինի պառլամենտական կառավարման մոդելով, մեր պետության և ազգային առանձնահատկությունները ներդնելու պայմանով: Իհարկե, գտնում ենք, որ կառավարման համակարգի փոփոխությունները պետք է լինեն աստիճանաբար, ոչ կտրուկ և այնպիսի պայմաններում, երբ առկա են բարեփոխումներ իրականացնելու վերը թվարկված պայմանները, իրական ժողովրդավարական գործընթացներ ու հասարակական պահանջ:

¹ Տե՛ս Додонов Вячеслав Николаевич. «Конституционные реформы в государствах, возникших на территории бывшего СССР». Дис. ... канд. юрид. наук, Москва, 1997.

² Տե՛ս Շահամիր Շահամիրյան, «Ռոնգալթ փառաց», 1773–թարգմանությամբ ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոնի, Երևան, 2002:

³ Տե՛ս Нерсесянц В. С. Общая теория права и государства, Москва, 1999.

РЕЗЮМЕ

Правовые реформы и проблемы Армении

В переходный период третьей армянской республики проводятся коренные правовые реформы. Учитывая необходимость в быстром и систематизированном проведении реформ, а также общественный спрос, более чем актуальным становится изучение процесса правовых реформ, которое имеет своей целью формирование и предложение концептуально-правовых подходов, наряду с развитием общественных, экономических, политических процессов для обеспечения непрерывного развития государства.

SUMMARY

Judicial reforms and issues of Republic of Armenia Brief description of the article (annotation)

During the transition period of the third Republic of Armenia radical juridical reforms were made. Taking into consideration the necessity of accelerated and structural reforms, as well as the needs of society, the study of the judicial reforms process is vastly actual aiming at the formulation and proposal of conceptual juridical approaches parallel to the developments of public, political, economical process providing uninterrupted development of the State.